ՆԱԻՐԱ ԼՅՈՎԱՅԻ ԳԻՆՈՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 23.11.1965 թվական

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Լյովայի Գինոսյանը Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1983 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը, որն ավարտել է 1988 թվականին։

1988 թվականին ընդունվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայի բաժին։

2012 թվականին պաշտպանել է ատենախոսություն՝ «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային կյանքում 19-րդ դարի երկրորդ կես – 20-րդ դարի սկիզբ թթ.» թեմայով։

2015 թվականին ստացել է դոցենտի գիտական կոչում։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

1992 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում։ Ներկայումս ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի գիտաշխատող է։

1997 թվականից առ այսօր դասավանդում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում։

Ն. Գինոսյանը հեղինակ է մեկ մենագրության, մեկ ուսումնամեթոդական ձեռնարկի և ավելի քան 25 գիտական հոդվածների, որոնցից մեկը տպագրվել է ՄԳՇ-ում։

Ն. Գինոսյանը պարգևատրվել է ԵՊՀ «Արծաթե մեդալով», ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի վաստակագրով։

Ն Գինոսյանը ամուսնացած է, ունի երկու զավակ, մեկ թոռնիկ: Կուսակցական չէ։